

Հաջող է ազատագրական սին պատրանքներից ու գրախոսության մտայնությունից զերծ ժողովրդական զանգվածների ազատագրական պայքարի և սեփական ուղի վերլուծությունը, բացահայտված է ժողովրդի դերը հայոց պատմության մեջ: Հեղինակը նոր խոսք է ասում թուրքական ժողովրդական շարժման առաջացման, նրանց զաղափարախոսության սոցիալական բովանդակության, ներքին և արտաքին կեղծիքների գեմ ուղղված լինելու և իշխող ֆեոդալական դասերի քաղաքական կողմնորոշումների մեջ նրա որոշիչ դերի մասին:

Հեղինակը բացահայտել է Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության քաղաքական և զաղափարական գրեթե ամենաբարձր, ցույց է տվել, որ Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը և սեփական միավորման փորձերը, ինչպես հայ, նույնպես և վրաց Բաղրատունիների շաներով հենվում էին այդ ժողովուրդների պատմական բախակցության, արտաքին ունեցած բանակցությունների պատմությունը և ի վերջո՝ Իսրայել Օրբելի գործունեության բնական վերլուծությունը, հայ ազատագրական մտքի դարձյալմիջ շրջադարձը և ժողովրդի ազատագրական անկախության պահպանման ու ամրապնդման և միավորվող եզրադրակից ժողովուրդներին արտաքին նվաճ-

ման վտանգից կամ օտար լծից ազատագրելու պայման:

Վերջապես, տաջին գրքում ցույց են տրվում սոցիալական և քաղաքական այն պայմաններն ու իրադրությունները, որոնց հետևանքով ազատագրական շարժումները XV—XVII դարերում նվազեցին, արևմտյան կամ արևելյան հորիզոններում կատարվող ազատագրական ղեկընդունող արդեն սկսեցին երևան բերել իրենց անանկությունը, սակայն ազատագրական հայտը անմար մնաց: Դեպի Արևմուտք ապարդյուն բանազնացություններից հետո հայ ազատագրական միտքը պիտի շրջվեր դեպի մի նոր հորիզոն՝ հյուսիս՝ Ռուսաստան:

Ներկրորդ գրքում, որը լույս է տեսել 1959 թ., մանրամասնորեն տրված է օսմանյան և սեֆեվյան տիրապետության և XV—XVII դդ. Հայաստանի ազատագրման հարցի շուրջը արևմտավրոպական պետությունների հետ հայերի ունեցած բանակցությունների պատմությունը և ի վերջո՝ Իսրայել Օրբելի գործունեության բնական վերլուծությունը, հայ ազատագրական մտքի դարձյալմիջ շրջադարձը և ժողովրդի ազատագրական անկախությունների լծորդումը Ռուսաստանի հետ:

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

И. К. КУСИКЪЯН, *Очерки исторического синтаксиса литературного армянского языка*. Изд. Академии наук СССР, Москва, 1959.

Նազույց էր գրառվում հայերենի պատմական շարահյուսության ուսումնասիրության անհրաժեշտությունը: Հայերենի տարբեր փուլերի շարահյուսության ստատիկ վիճակի նկարագրական ուսումնասիրություններ քիչ չեն հրապարակվում, ինչպես՝ Ստ. Պալասյանյանի «Գործնական բերականության» երկրորդ հատորը՝ «Համաձայնություններ» (որտեղ քննության են առնված միայն գրարարի լեզվական իրողությունները, 1869 թ.), տիպոգ. Ստ. Մալխասյանցի «Գրարարի համաձայնություններ» (1892), Հար. Խումանյանի «Հայոց աշխարհագրար լեզվի համառոտ համաձայնություններ» (1911), պրոֆ.

Մ. Արևելյանի «Աշխարհագրարի շարահյուսություններ» (1912), պրոֆ.-դոկտ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություններ» (1937), և գոցենտ Վ. Առաքելյանի «Շարահյուսություններ» (արդի հայերենի լեզվական փաստերի վրա հիմնված, հ. Ա., 1959) աշխատությունները,

էլ չեն խոսում գրարարին վերաբերող շարահյուսական այն հարուստ գիտողությունների մասին, որոնք ունեցված են դասական հայերենի մեր խաչորագույն բերականների ձեռնարկներում: Առվածին պետք է ավելացնել նաև այն, որ պատմա-համեմատական լեզվաբանության կարկառուն ներկայացուցիչ և միաժամանակ խոշոր հայապետ Անտուան Մեյլեն, ի տարբերություն վերը հիշած հեղինակների, առաջին անգամ դասական հայերենի շարահյուսական իրողությունները վերլուծության է ենթարկել պատմա-համեմատական լեզվաբանության տեսանկյունից:

Սակայն հայերենի պատմական շարահյուսության ուսումնասիրությունը, որը պետք է բնագրի հայերենի դարգացման բոլոր փուլերը, առաջին անգամ տրվում է պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանի վերջերս լույս տեսած «Գրական հայերենի պատմական շարահյուսության ուղղա-

գծեր» արժեքավոր աշխատությունը: Հեղինակը սկզբից եկեթ խոստովանում է ձևական հետազոտության ամբողջ բարդությունն ու դրժվարությունը, նշելով, որ «Եթե նկատի ունենանք դրավոր տվյալների ժամանակագրական այն հսկայական շրջանակը (ավելի քան 1500 տարվա) և ձևաբանության մեջ, հետևաբար նաև բնութանրապես հայերենի համակարգում կատարված զգալի փոփոխությունները, ապա հասկանալի կլինի, որ ամբողջական պատմական շարահյուսության ստեղծման համար նախապատրաստական աշխատանքը հնարավոր կլինի իրագործել միայն մի շարք հայագետների կողմից (էջ 3): Այդ պատճառով հեղինակը իր առաջ համետ նպատակ է դրել՝ «...նշել հայերենի շարահյուսության դարգացման նշանակեցերը (կոտորները)»՝ նկարագրելով նրա առանձին կողմերը պատմական տեսանկյունից: Բայց նույնիսկ նման հարցադրումը և նրա լուծումը կապված է չափազանց բարդ ու կնճոտ երևույթների լուսարանման հետ, մանավանդ, երբ նկատի ունենանք, որ դատաշին իրիդախ և, պետք է ասել նաև՝ հաջողված փորձն է հայագիտության մեջ:

Գրախոսվող աշխատությունը բազկացած է ստադրանից, «Հայերենի պատմական շարահյուսության ուսումնասիրության խնդիրներն ու մեթոդները» հատվածից, «Հայերենի հնագույն շրջանի շարահյուսության մասին», «Հին-կերտրդ դարի հայերենի շարահյուսության մասին», «Փոփոխություններ հայերենի շարահյուսության մեջ 6—12-րդ դարերում և նրանց բնույթը», «Միջին հայերենի շարահյուսության մասին (13—16-րդ դարերի շարահյուսության հիմնական գծերը)», «Արդի հայերենի շարահյուսության մասին (արևելյան տարբերակը)» դրուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են համապատասխան ենթադրուխների ու հտովածների:

Պատմական շարահյուսության ուսումնասիրման խնդիրներն ու մեթոդները քննելիս, հեղինակը գիտական պատշաճ դնահտտական է տալիս 18—20-րդ դարերում հանդես եկած այն բերականներին, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են հայերենի շարահյուսության դարգացման տարբեր կողմերին: Ըստ որում նրանց դիտողությունները մեծ մասամբ հանդում են հետևյալին. հիշյալ քերականները բավարարվում են սոսկ նրանով, որ նշում են դատական հայերենի շարահյուսական այս կամ այն երևույթի խախտումը կամ բացակայությունը միջին հայերենում, և կամ՝ մշու կողմից, արդի հայերենին նվիրված քերականական ձևանարկներում ու մեկագրական աշխատություններում պարզապես արձանագրում են

շարահյուսական երևույթների ընդհանրություններն ու տարբերությունները դասական հայերենի նկատմամբ: Գրախոսվող աշխատության հեղինակը առանձնապես բարձր է գնահատում այն հայագետներին, որոնք իրենց աշխատություններում փորձեր են կատարել լուսարանելու դարերի բնթացում տելի ունեցած շարահյուսական փոփոխությունները (օրինակ, Ա. Այտընյանին, Ս. Պալասանյանին, Ստ. Մալխասյանին, Հր. Աճառյանին, Մ. Աբելյանին, Ա. Մելինին, Ի. Կարստին և ուրիշներին), ինչպես նաև բարբառագետներ Բ. Պատկանյանին, Ս. Սարգսյանցին, Լ. Մսերյանցին, որոնց երկերում քիչ չեն այնպիսի դիտողություններ, որոնք այս կամ այն կերպ ակնարկում են դասական հայերենի կամ միջին հայերենի շարահյուսական երևույթների վերապրուկների առկայությունը այս կամ այն բարբառում: Նկատենք, որ այս բոլորը, անշուշտ, միայն առահձին տվյալներ կարող են հաղորդել հայերենի պատմական շարահյուսության դրագույին, որոնք թեև շահեկան են, բայց չեն կարող լուծել այն խնդիրները, որոնք ծառանում են հետազոտողի առաջ:

Պրոֆ. Հ. Կուսիկյանը միանգամայն իրավացի կերպով քնդդծում է նաև, որ սովետական հայագետներին՝ հայերենի պատմական շարահյուսությունը ուսումնասիրելուն մեծապես խանգարել է Ն. Յա. Մառի այսպես կոչված «լեզվի նոր ուսմունքը»: Բանն այն է, որ հակադիտական այս «ուսմունքի» դրույթները, յաալ և աղճատված ձևով ներկայացնելով լեզվի դարգացման բնդհանուր պրոցեսն ու նրա օրինաչափությունները, ժիտում են լեզվի պատմականությունը, խզում նրա տարբեր ստատիկ փուլերի միջև եղած կապերն ու հաջորդականությունը. ավելին, լեզվի դասակարգանություն հակամարտիտական ֆորմուլան, իր հերթին, հանգեցրեց այն լանին, որ ֆեոդալական լեզու հայտարարված դասական հայերենի՝ դրաբարի նկատմամբ արհամարհական և նվաստացուցիչ վերաբերմունք ցուցաբերվեց. հասկանալի է, որ նման պայմաններում բացառվում էր հայերենի պատմական շարահյուսության մասին որևէ լուրջ ուսումնասիրություն կատարելու հնարավորությունը:

Հայերենի պատմական շարահյուսության ուսումնասիրության իր եղանակն ու դրույթները շարադրելիս, պրոֆ. Կուսիկյանը ելնում է ճիշտ նախադրյալներից և դիտական հաստատուն դիրբերից: Իր հետազոտած առարկան նա պատկերացնում է իր ամբողջ խորությամբ ու լայնությամբ. «Պատմական շարահյուսության հիմնական խնդիրը,— գրում է պրոֆ. Կուսիկյանը,— պետք է դիտել նախադատություններում

բառակապակցությունների փոփոխությունների ուսումնասիրման մեջ, քերականական կանոնների կամ շարահյուսական օրենքների փոփոխությունները ուսումնասիրելու մեջ: Պատմական շարահյուսության մեջ պետք է հետազոտվեն նորմաների փոփոխությունների որոշակի տեղեկանքները՝ ինչպես բառակապակցություններում, այնպես էլ պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքներում» (էջ 6): Այս առթիվ հեղինակը զգուշացնում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև այն փաստերը, որոնք ցույց են տալիս լեզվի քերականական կառուցվածքի դանդաղ, աստիճանական փոփոխությունը: Նա պահանջում է, որ պատմական շարահյուսության ուսումնասիրությունում բացահայտվի, թե պատմական մի շարք դարաշրջաններում հատկապես լեզվի ո՞ր կողմերն են հանդես բերել առավել կայունություն փոփոխությունների նկատմամբ՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ցույց տրվի, թե շարահյուսական ինչպիսի՞ երևույթներն այս կամ այն չափով փոփոխությունների են ենթարկվել դարերի ընթացքում: Հարցի լուսարանումը դեռ այսօրանով էլ չի սպառվում: հեղինակը արդարացի կերպով գտնում է, որ շարահյուսական երևույթների փոփոխությունները չպետք է դիտել իրեն ինքնապարփակ և ինքնանպատակ՝ որպես այդպիսին, այլ այդ փոփոխությունները անհրաժեշտ է քննել և ուսումնասիրել իբրև արդյունք լեզվի դարգացման ներքին օրինաչափությունների, այլ կերպ ասած՝ տվյալ շարահյուսական երևույթների և նորմաների ճշգրտման ու կատարելագործման տեսանկյունից: Եվ իրոք, այս պահանջը այնքան կարևոր և երկնային չէ, որ անհրաժեշտ է դիտել, որ դրանով հետազոտվող առարկայի շարադրանքին գիտական լուրջ բնույթ է հաղորդվում: Հեղինակը արդարացի է նաև այն հարցում, երբ պնդում է, որ լեզվի զարգացումը տեղի է ունենում անհավասարաչափ կերպով՝ ինչպես ժամանակադրական տարբեր փուլերում՝ շարահյուսական երևույթների, այնպես էլ լեզվի առանձին կողմերի փոփոխությունների տեմպերի տեսակետից: Ենելով այս ճիշտ դրույթից, պրոֆ. Վուսիկյանը գիտական ամենայն թափանցողությամբ ուշագրավ կերպով հետևում է հայոց լեզվի զարգացման ամբողջ բարդ և վերին աստիճանի հակասական ընթացքին՝ համակողմանի մոտեցում ցուցաբերելով լեզվական այս կամ այն երևույթի լուսարաններին:

Սակայն հայերենի (և ո՛չ միայն հայերենի) պատմական շարահյուսության հարցերը հնարավոր չէ լուծել ինքնին՝ մեկուսացված ձևով, առանց ձևաբանության հետ նրա ունեցած սերտ աղերսի: Ավելին, շարահյուսության զարգացումն ու փոփոխումը զուգորդում են ձևաբա-

նություն դարգացմանն ու փոփոխությանը, իսկ շատ դեպքերում էլ պայմանավորվում են վերջինով: Եվ եթե այսօր դրապետ հայր դժվարանում է կարգալ և հասկանալ 1500 տարի առաջ կենդանի գործածված դասական հայերենը, ապա դրա պատճառը ուրիշ բան չէ, եթե ոչ արդի հայերենի ձևաբանության և շարահյուսության արմատական տարբերությունը հին հայերենից: Բոլոր բառերը նա կարող է բացել (որովհետև հայերեն են և դեռ այսօր էլ կազմում են արդի հայերենի բառային կազմի հիմնական մասը), բայց չի կարող հասկանալ բառերի և բառակապակցությունների, ինչպես նաև բայի նախադասության մեջ նրա բազմաբան փոխաբերությունը միևնույն նկատմամբ: Այս առումով գրախոսվող հեղինակի մոտեցումը նույնպես արդարացի է: Նա ամբողջ նյութի ուսումնասիրությունը կատարում է հայերենի ձևաբանության մեջ տեղի ունեցած աղետաբերի ու փոփոխությունների մեկնաբանման հետ զուգահեռ:

Պետք է նկատել, որ շարահյուսական փոփոխությունների մասին խոսելիս, հեղինակը ավելի շուտ ծանրացել է նախադասության ներսում բառակապակցությունների ուսումնասիրության, քան բուն նախադասությունների (պարզ թե բարդ) տարբեր տիպերի ու տեսակների էվոլյուցիայի և նրանց առանձնահատկությունների հաշվառման և վերլուծության վրա: Ինչպես հայտնի է, շարահյուսության առարկան է հանդիսանում ոչ միայն բառակապակցությունների, այլև նախադասության տարբեր կառուցվածքների և տիպերի ուսումնասիրությունը: Ի դեպ նշենք, որ հեղինակը պարզ և բարդ նախադասությունների ուսումնասիրման հարցը դնում է, բայց նրա լուսարանությունը չի ստանում սպառելի բնույթ: Այդ առթիվ նա գրում է. «Պարզ նախադասությունների, բայց համադասական և բարդ ստորադասական նախադասությունների տիպերի փոփոխությունները պետք է բացահայտվեն այն նպատակով, որպեսզի ցույց տրվի, թե նախադասությունների կառուցվածքային ինչպիսի միջոցներն այս կամ այն պատճառով բնական են (դուրս են մղվել գործածությունից) — է. իս. ) և, ընդհանրապես այդ միջոցներից որո՞նք ոչ միայն պահպանվել, այլ տվել են իրենց բոլորովնությունը» (էջ 7):

Ինչպես տեսնում ենք, հեղինակի հարցադրումը չափազանց կարևոր է և առանցքային նշանակություն ունի պատմական շարահյուսության տեսակետից, ուսկայն ամբողջ աշխատության շարադրանքի մեջ շատ քիչ տեղ է հատկացված, այն էլ ընդհանուր ձևով, միայն համադրության կառուցում, հիշյալ հարցի լուսարանմանը: Մեզ թվում է, որ այս կողմից խնդրի

համակողմանի և հանգամանալից հետադուրմանը խանգարել և աշխատության սեղմ ծավալը՝ իր շուգամած վիթխարի թեմայի նկատմամբ:

Կարևոր է նշել, որ հայոց լեզվի զարգացման յուրաքանչյուր ստառիկ վիճակի շարահյուսական քննությունը կատարելիս, հեղինակը ուշադիր հետադուրմության է դիմում գրավոր արտահայտված տվյալ լեզվի և նրա նկատմամբ բարբառների թողած ազդեցության փոխհարաբերություններին: Այդ նշանակում է, որ հեղինակը հետամուտ է լինում մեր լեզվի դինամիկ զարգացման ընթացքին ոչ թե մեկուսացված ձևով՝ լեզվական շրջապատից ու միջավայրից կտրված պայմաններում, այլ հենց այդ միջավայրի հետ սերտորեն շաղկապված ու աղբյուրակցության մեջ:

Ավելին, աշխատության հավելագիր արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը հայոց լեզվի պատմական շարահյուսությունը շարադրելիս, հաճախ է դիմում այդ լեզուն կրող ժողովրդի պատմական ճակատագրին, նրա հանգուցային գրվագներին, որոնք, իրենց հերթին, լույս են սփռում այլ կերպ անբացատրելի լեզվական այս կամ այն երևույթների բմբուռմանը:

Հայոց լեզվի պատմական շարահյուսության պարբերացումը կատարելիս, պրոֆ. Կուսիկյանը առաջնորդվել է գիտական սկզբունքով. քանի որ շարահյուսական նսր որակի երեւույթների առաջացումը և հին որակի երեւույթների անհետացումը տեղի է ունենում դանդաղ, աստիճանաբար և աննկատ ձևով, հետեւաբար անհնար է ժամանակագրական ճշգրիտ սահմանագիծ որոշել գրանց հաջորդականության միջև, ապա այդ դեպքում պատմական շարահյուսության պարբերացման համար հիմք պետք է ընդունել միայն նույնանման երևույթների քանակային կուտակումը կամ անհետացումը: Մեկնելով դրանից, պրոֆ. Կուսիկյանը հայոց լեզվի պատմությունը բաժանում է հինգ դարաշրջանների. ա) հնագույն շրջան՝ մինչև մեր թվականության 5-րդ դարը, բ) հին շրջան՝ 5—12-րդ դդ., գ) միջին շրջան՝ 12—17-րդ դդ., դ) նոր շրջան՝ 17—19-րդ դդ., ե) նորագույն շրջան՝ 19—20-րդ դդ.:

Հնագույն շրջանի հայերենը, որը հայագիտության մեջ կոչվում է նաև վիպասական հայերեն (8—2-րդ դդ. ն. մ. թ.), պրոֆ. Կուսիկյանը քննում է Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի և Մագիստրոսի աշխատություններում ժողովրդական բանահյուսությունից պահպանված առանձին հատվածների ընձեռած լեզվական իրողությունների հիման վրա: Չնայած այն կարծիքին, որ տարածված է հայ մա-

տենագրության մեջ, թե մեսրոպյան տառերից (393—395 թթ.) առաջ հայերը գիր ու գրականություն չեն ունեցել, պրոֆ. Կուսիկյանը համակարծիք է այն հայագետներին, որոնք ենթադրում են հայ գրի ու գրականության գոյությունը ասորերեն կամ հունարեն տառերով: Այդ պնդման համար իբրև հիմք և փաստարկ վկայակոչվում են Ղազար Փարպեցու հայտնի խոսքերը, Երվանդինս աներկրայունը գրում է. հայկական արքունիքում «ասորի և յայն գրով վճարելին յայնժամ գործ թագաւորացն Հայոց արքունի դպիրքն. զվճուցն և զհրովարտականցն»<sup>1</sup>: Այս տեսակետի օգտին է խոսում նաև այն, որ մեսրոպյան գրերի գյուտից անմիջապես հետո ստեղծված մեր հարուստ մատենագրությունը աչքի է ընկնում իր լեզվական կուլտուրային աշխատություններով, աֆորիզմներով, պատկերավոր արտահայտություններով, գեղեցիկ ու դիպուկ դարձվածքներով, և, վերջապես, նախադասությունների զարգացած տիպերով ու բարդ նախադասությունների հարուստ համակարգով (շաղկապավոր և հարաբերական բառերի ուղատ գործածությամբ հանդիքձ): Կարելի է սրանում հեշտությամբ համոզվել, երբ նկատի ունենանք, որ մեր օրերում իսկ նոր գիր ու գրականություն ստացած ժողովրդի վեզուն շատ ավելի նախնական է լինում, պատրաստի ձևով նա փոխ է առնում համապատասխան գաղափարների արտահայտելու համար բազմաթիվ բառեր, արտահայտություններ, դարձվածքներ, և առհասարակ ակներախ է լինում քերականական կանոնների խայտարհեցողությամբ ու ոչ հաստատուն օրինաչափություններով:

Լեզվական այն սակավ նյութը, որ ընձեռում է վիպասական շրջանի հայերենը, պրոֆ. Կուսիկյանը շարահյուսական մանրակրկիտ վերլուծության է ենթարկում: Այս գլխում քննում է պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքը՝ դիմավոր բայաձևերով և կամ դերբայով արտահայտված ստորոգյալներով, նշում գլխավոր և երկրորդական անդամների բնույթն ու նրանց կատարած ֆունկցիան, ընդգծում հոգևոր և նախդիրների կարևոր դերը հին հայերենի շարահյուսական համակարգում, ինչպես նաև բացահայտում շարադասության առանձնահատկությունները: Որոշիչի և որոշյալի փոխհարաբերությունները քննելիս, ուշադրով է հեղինակի կարծիքը այս առթիվ. նա բազմաթիվ փաստեր է բերում վիպասա-

<sup>1</sup> «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանի», Տփղիս, 1904, էջ 13:

նական հայերենից, երբ որոշելը դրվում է նաև իր որոշալից առաջ՝ թվով և հոլովով չհամաձայնելով դրան։ «Սակայն որոշիչ մեծ ազատությունը՝ դրվելով երբեմն նախադաս, երբեմն հետադաս, խոսում է այն մասին, — գրում է հեղինակը, — որ միջին և հատկապես արդի հայերենում որոշիչի նախադաս դիրքում ամբողջովի միայն ձևաբանական փոփոխությունների արդյունք չէ, որ տեղի են ունեցել միջին և արդի հայերենում, այլ դրա հետ մեկտեղ հանդիսանում է հնագույն հայերենում գոյություն ունեցող երևույթի հարատևումն ու ամրապնդումը» (էջ 21)։ Ինչպես տեսնում ենք, հեղինակը շարահյուսական երևույթների բացատրությունը տալիս է պատմական հաջորդականություն և կապի մեջ, նորի գարգացումն ու ծավալումը միշտ դիտելով հին ընդերքում, նոր արակի տարրերի աստիճանական տարածման և հին որակի տարրերի աստիճանական մահացման պայմաններում։ Ընդամենն պետք է ընդգծենք, որ նա գիտական նույն եղանակով է առաջնորդվում նաև շարահյուսական մյուս երևույթները լուսաբանելիս։ Դրանով է նա շատ անգամ տարբերվում և նույնիսկ հակադրվում այն հայագետներին, որոնք երբեմն հայերենի այս կամ այն երևույթի ձևում են բացատրել ոչ թե լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով, այլ սոսկ արտաքին գործոնով՝ ազդեցություններով։

Հայագիտության համար առանձնապես կարևոր են այն հետևությունները, որ պրոֆ. Կուսիկյանը արել է այս հատվածի վերջում. «...հնագույն հայերենի նախադասությունների կառուցվածքում չկա մի հատկանիշ, որը շարահյուսական կողմից ցեղակից դարձնի նրան կովկասյան կամ սեմական լեզուներին։ Մասնավորապես նախադասության կառուցվածքում կովկասյան լեզուներին շատ բնորոշ այսպես կոչված էրգատիվ կառուցվածքի (նախադասություն) ոչ մի հատկանիշ չկա» (էջ 28)։ Այնուհետև. «Հնագույն շրջանի հայերենի պարզ նախադասության հնդեվրոպական բնույթը կարելի է բացատրել ոչ միայն ծագումնաբանական տեսակետից, այլև նրանով, որ այդ լեզուն դեռևս չէր նախնական վիճակում զարգացել է հին պարսկերենի և հնդեվրոպական լեզուներին պատկանող ինքնական լեզուների հարեանություն պայմաններում» (էջ 28)։

Մերերոգ գլուխը, որը վերաբերում է հիմնականում դասական հայերենի շարահյուսական հարցերի քննությանը, կազմում է աշխատության ամենածավալուն մասը (35—92 էջեր)։ Այստեղ՝ նշելից, Կորյունից, Բուզանդից, Նզիհից, Փարպեցուց բաղված օրինակ-

ների հիման վրա, վիպասանական շրջանի հայերենի հետ ունեցած պատմականության ու հաջորդականության կապերի մեջ հետազոտվում են շարահյուսական նույն երևույթների ընդհանրություններն ու տարբերությունները նախորդ շրջանից։ Ուշագրավ է, որ հեղինակը իր փաստական նյութի ընտրության նկատմամբ տարբերակված մոտեցում է ցուցաբերել. նա սահմանազատել է թարգմանական և ինքնուրույն ստեղծագործությամբ արտադրված մատենագրությունը, ըստ այդմ էլ հատուկ վերաբերմունք դրսևորել. այս տարբերակումը կատարելիս հեղինակը միտում է ունեցել ցույց տալու, մի կողմից՝ թարգմանված լեզուների (հիմնականում հունարենի և ասորերենի) ազդեցությունը հայերենի շարահյուսության վրա, մյուս կողմից՝ ինքնուրույն ստեղծագործություններում բարբառների ազդեցությունը։ Որքան էլ հաշվի են առնվում նման ազդեցությունների հնարավորությունը, հեղինակը շեշտը դնում է հայերենի շարահյուսական կանոնների և նորմաների զարգացման ներքին օրինաչափությունների վրա։ Փոխազդեցությունները ընդունվում և մերվում են հայերենի շարահյուսական համակարգի մեջ միայն այն չափով, որչափով որ դրանք համապատասխանում են հայերենի ընդհանուր ոգուն և նպաստում շարահյուսական այս կամ այն երևույթի ճշգրտմանը, կատարելագործմանն ու արտահայտչականությանը։ Այդ տեսակետից ուշագրավ են հեղինակի քննած երկու գործոնների դերն ու նշանակությունը՝ պատմական ասպեկտով դիտված։

Պրոֆ. Կուսիկյանը կողմնակից է այն տեսակետին, ըստ որի որոշակի կերպով կազմավորված բարբառների առկայությունը դեռևս 5-րդ դարում կանխածից վեր է համարվում. այս հարցում նա հակադրվում է Աճառյանին և այլ հայագետներին, որոնք գտնում են, որ մեսրոպյան հայերենը իր հնչյունական, ձևաբանական և շարահյուսական համակարգերով, ինչպես նաև բառային կազմի ընդհանրությամբ միասնական կուռ լեզու է եղել, որից մեկնելով ենթադրում են, որ այդ շրջանի հեղինակների երկերում ընդհանուր օրինաչափություններից շեղվող մասնակի և աննշան տարբերությունները հիմք են տալիս միայն ենթադրաբանների գոյությունը և ոչ բարբառների<sup>1</sup>։ Պրոֆ. Կուսիկյանը այս առթիվ օգտագործում է Նորայր Բլուզանդացու «Սորին վարդապետ և նորին թարգմանությունը» (Տփղիս, 1900) աշխատության տվյալները, ինչպես նաև իր կողմից

<sup>1</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Բ, Երևան, 1951, էջ 125։

նկատված շարահյուսական տարբերությունները, որոնք ավելորդ անգամ հաստատում են Աճառյանի տեսակետը: Կարծում ենք, որ գրաբարի բայական համակարգի իմաստային-եզանակային խոստաբղետությունը, սահմանական եզանակի ներկա անկատարի, և մանավանդ անցյալի անկատարի, 1-ին և 2-րդ ապառնինների արտահայտած ըղձական, հարկադրական և պայմանական եղանակների իմաստները չպետք է բարբառային տարբերությունների ներթափանցման արդյունք համարել: Կա ավելի շուտ դասական հայերենով խոսող հանրության ընդհանրական այդ իմաստների բնութագրման հետևանք է: Նույնպես ճիշտ չենք գտնում նաև հարգելի պրոֆեսորի այն կարծիքը, որ իբր դասական հայերենում խնդրառություն տեսակետից առանձին բայերի տարամիտում հանդես բերելը բարբառային աղղեցության նշանակություն ունի: Իրականում, միևնույն բայերի տարբեր խնդրառությունը կապված է բայիմաստի փոփոխության հետ, բայական սեռի տեղաշարժերի հետ: Ինչ վերաբերում է «իրեր» հարաբերականով կազմված երկրորդական նախադասությունների՝ ուսուցողական անցյալ դերբայով արտահայտված փաստին, որի հաճախականությունը շատ ակնբախ է Կոլյունի մոտ, ապա դա նույնպես բարբառայնության ուժեղ դրսևորում չի կարող համարվել. բանն այն է, որ առհասարակ դերբայական նախադասությունների տարբեր տիպերն ու կառուցվածքները երբեք էլ անհարադատ չեն եղել դասական հայերենին. ընդհակառակն, դերբայական նախադասությունների լայն կիրառությամբ զրաբարը սահմանադատվում է հայերենի զարգացման հետագա փուլերից և կապվում հնդեվրոպական հիմք-լեզվի հետ, ինչպես այդ ցույց է տվել Ա. Մեյլեն<sup>1</sup>:

Խոսելով աղղեցությունների երկրորդ գործունի՝ հատկապես հունաբանության մասին, պրոֆ. Կուսիկյանը բնութագրում է այն միանգամայն ճիշտ դիրքերից: Թեև լայն չափով հունաբանությունը ներծծվեց 5-րդ դարի վերջից մինչև 12-րդ դարի հեղինակների մեծ մասի երկերում, սակայն շարահյուսական և ձևաբանական այլ կարգի նրա նորամուծությունները ամուլ մնացին հայոց լեզվի զարգացման ճանապարհին, եթե չհաշվենք հայերենի բառակազմության բնագավառում նախածանցների հարստացման գործում նրա դրական նշանակությունը: Հունաբանական զարգացման ներկայացուցիչները, այնուամենայնիվ,

մենայնիվ, կարևոր դեր խաղացին մեր մշակույթի բարձրացման ընդհանուր գործում: Լեզվի բնագավառում նրանց գործունեության կողմնակի արդյունքը եղավ այն, որ նրանք հունարենի նկատմամբ ստրկական հետևողականություն ցուցաբերելիս հարկադրված եղան ուսումնասիրել նաև հայերենի լեզվական փաստերը, երևան հանել նրա համապատասխանությունները հունարենի խոսքի մասերի նկատմամբ: Սակայն հունաբան զարգացման ծայրահեղությունները, իրենց հերթին, հակառակ սեպիցիա առաջացրին հայոց լեզվի զարգացման նախանձախնդիր մշակների մոտ. դրանից ինչպես ենք տեսնում, որոնք առավել ևս ամուր կառչեցին դասական շրջանի նորմաներին ու օրինաչափություններին, որի պատճառով նրա գրաբար լինելը առավել ևս բնորոշվեց, մյուս կողմից՝ հանդես եկան նաև այնպիսի գրողներ, որոնք զիմեջին իրենց ժամանակի խոսակցական լեզվին:

Ներափակելով իր դիտողությունները շարահյուսության բնագավառում հունաբան զարգացման նորամուծությունների մասին հեղինակը խորհուրդ է տալիս նշում է. «Հունաբանների շարահյուսական նորամուծությունների վերաբերյալ պետք է ասել, որ դրանք գլխավորապես ռեալիզմն են բնույթ էին կրում» (ընդգծումը մերն է — է. Խ., էջ 86):

Երրորդ գլուխը, որը նվիրված է 6—12-րդ դարերում հայոց լեզվի շարահյուսության մեջ կատարված փոփոխություններին, պրոֆ. Կուսիկյանը խորաթափանց կերպով և մանրազրնին դիտողություններով ցույց է տալիս շարահյուսական այն տեղաշարժերը, որոնք դանդաղ, աննկատ ձևով, աստիճանաբար իրենց զգալ են տալիս: Հեղինակը մերժում է բուրժուական հայագիտության կողմից ընդունված այն տեսությունը, որ իբր հայերենի զարգացման հետագա փուլերը արդյունք են դասական գրաբարի «քայքայման», «աղավաղման» կամ «փլացման», որից մեկնելով հայերենի պարբերացումը տրվում էր իբրև «ոսկեդարյան», «արծաթի», «պղնձի» կամ «ցեխի» դարերի հայոց լեզուներ: Նա դասական հայերենի նկատմամբ մատենագրության մեջ հանդիպած շեղումները, նահանջներն ու տարբերությունները դիտում է իբրև ժողովրդական խոսակցական լեզվի տարբերի ներթափանցում: Դին լեզվի ընդերքում: 7-րդ դարից սկսած մատենագրության մեջ տեղ գտած «առավիկ», «մթին», «գոհհիկ» լեզվի մասին արտահայտությունները հեղինակը ճիշտ կերպով մեկնում է իբրև ժողովրդական խոսակցական լեզվի վկայություն: Ի հակադրություն «ոստանիկ»՝ գրաբար լեզվի Այս առթիվ հեղինակը նշում է առավել

<sup>1</sup> A. Meillet, La phrase nominale pure en armenien, Extrait des Memoires de la Societe de Linguistique de Paris, t. XV, էջ 5:

յտակն Գրասխանակերտցու՝ Շապուհ Բաղդատունու պատմության մասին արած հիշատակության, Թ. Քոթենավորի, Սմբատ Դունգրատարի, Գ. Տաթևացու և այլոց ասույթների վրա, որոնք որոշակի կերպով ընդգծում են խոսակցական լեզվի հակադրությունը գրարարի նկատմամբ։ Այն դեպքում, երբ մասնաների հոգևոր դատարան-կության խնդիրները պահանջում էին նրանց գիտակցության վրա ներգործելու համար պատրաստի ձևակերպումներ, գրում է հեղինակը, ապա դրաբար միանգամայն բավարարում էր այդ պահանջը, իսկ աշխարհիկ գիտությունների երևան գալը (ինչպես՝ բժշկականության, օրենսդրության, տոմարագիտության, աշխարհագրության, գրական տարբեր ժանրերի) հրամայական պահանջ էր առաջացնում կենդանի խոսակցական լեզվի իրողությունները կիրառելու նաև մատենագրության մեջ։ Ինչպես տեսնում ենք, հեղինակի մոտեցումը այս հարցում ևս միանգամայն արդարացի է և գիտականորեն հիմնավորված։ Սակայն մեզ թվում է, որ այս փոքրիկ, բայց շատ արժեքավոր հատվածը (93—100 էջեր) կառուցվածքային տեսակետից առանձին գլուխ կազմելու իրավունք չունի։ դա ավելի շուտ ներածական մաս կարող էր կազմել հաջորդ գլխի՝ միջին հայերենի շարահյուսությանը նվիրված բաժնին։

Չորրորդ գլխում հեղինակը քննում է միջին հայերենի շարահյուսության հիմնական գծերը՝ 13—16-րդ դարերի մատենագրության մեջ։ Այստեղ տրվում են «Կու» և «Ու» բարբառային ձևերի առաջացման պատմական նախադրյալներն ու նրանց կազմավորման պրոցեսը։ Բարբառային առաջին ձևերը կազմավորվում է Միլիկյան Հայաստանում, իսկ երկրորդը՝ Կենտրոնական Հայաստանում՝ Արարատյան դաշտավայրում։ Եթե Կիլիկյան Հայաստանում, Ռուբինյան թագավորության առկայության պայմաններում, միջին հայերենի զարգացումը տեղի ունեցավ «Կու» ձևերի բարբառներից մեկի գրական աստիճանի բարձրացման շնորհիվ, և, բնականաբար, գիտության շատ բնագավառների բուռն ծաղկումը արտացոլող հարուստ մատենագրությամբ, ապա նույն երևույթը, բայց ավելի անբարենպաստ պայմաններում, «Ու» ձևերի բարբառների գրական տարբերակով առաջացավ և ծաղկեց Կենտրոնական Հայաստանում։ Միջին հայերեն հասկացության մեջ հեղինակը ընդգրկում է հենց այս երկու բարբառային ձևերը՝ իրենց զարգացող արտադրանքներով, միայն այն տարբերությամբ, որ եթե Կիլիկյան Հայաստանի լեզուն համեմատաբար ուսումնասիրված է ավելի հանգամանորեն (օրինակ, Ի. Կարստի հեծարժեր աշխատությունը), ապա Կենտրոնա-

կան Հայաստանի «Ու» ձևերը ներկայացնող երկերի լեզուն, որը պահպանվում է ձևադիրաշխատություններում, դեռևս գիտական ուսումնասիրության ոլորտից դուրս է մնացել։ Ուշագրավ է, որ հեղինակը գրական այս երկու տարբերակների միմյանց կապող սուբստրատային շերտը համարում է դրաբար, որով պահպանվում էին հայերենի համաժողովրդական որակն ու զարգացման համընդհանուր տենդենցները։ Հեղինակի կարծիքով՝ թեև բարբառային տարբերությունների հիման վրա առաջացան սրու՝ փոփոխություններ ձևաբանության առանձին կողմերի մեջ (ինչպես՝ դիմորդ հոգերի կիրառության մեջ, հոլովական և բայական վերջավորությունների կառուցվածքում), ստեղծվեց բառամթերքի բազմազանություն, սակայն բառային հիմնական ֆոնդը, ձևաբանության և շարահյուսության հիմնական նորմաները մնացին ընդհանուր (տե՛ս էջ 102)։

Ցանկալի կլիներ, որ հայոց լեզվի պատմության ուսումնասիրման համար շրջադարձային նշանակություն ունեցող այս հատվածի լեզվական փաստերի լուսաբանմանը ավելի շատ տեղ հատկացվեր, քան կա քննարկվող աշխատության մեջ (103—107 էջեր)։

Գրախոսվող աշխատության հերկորդ ծավալուն մասը վերջին գլուխն է, որը նվիրված է աշխարհարարի (արհեստի գրական լեզվի) և արդի հայերենի շարահյուսական համակարգի քննությանը (108—151 էջեր)։ Այստեղ շարահյուսական շատ կարևոր գիտողություններ են տրվում՝ աշխարհարարի լեզվական իրողությունները համեմատության մեջ դնելով հայերենի զարգացման անցած փուլերի հետ։ Հին հայերենի ձևաբանության փոփոխության հետ փոխվում է նաև շարահյուսության ամբողջ համակարգը, բայց որում հեղինակը իր վերլուծությունը կատարելիս չի ձգտում միայն փոփոխություններն ու տարբերություններն տեսնել, այլև նկատում և արձանագրում է նաև շարահյուսական այնպիսի երևույթներ, որոնք իրենց բնույթով համեմատաբար մեծ կայունություն են ցուցաբերել դարերի ընթացքում։ Արդի հայերենի հոլովների մասին խոսելիս հեղինակը գտնում է, որ դրանք իրենց կատարած ֆունկցիայով հիմնականում չեն տարբերվում դասական շրջանի հոլովների ֆունկցիաներից, այստեղ կատարվում է մի վերապահություն՝ եթե հին հայերենի հոլովական համակարգը բաղկացած էր վեց հոլովներից, իսկ ներդասականի բերականական իմաստի դրսևորման համար օգտվում էր՝ եզակիում՝ տրականից և հայցականից, հոգնակիում՝ միայն հայցականից (Ի նախդիրի հետ միասին), ապա ժամանակակից հայերենի հոլովական համակարգը օժտված է տե՛ս հոլովներից՝ ներդասականի բերականորեն

աւրույն ձեւավորման հետ միասին՝ Հեղինակը հետեւելով հայոց լեզվի պատմության ամբողջ լինթագրին, նկատում է, որ հին հայերենը, բայցի հոյովական հարուստ սիստեմից, օժտված էր նաև նախդիրների և նախադրությունների ու հետադրությունների կուռ համակարգով, որոնք շարահյուսական ու ոճական ամենատարբեր և ամենանորր իմաստներ՝ էին դրսևորում, հաղորդելով դասական հայերենին առավել ճկունություն և արտահայտչականություն։ Եսական հայոց լեզվի հետագա փոփոխում և փոխապես աշխարհարարում, ձևաբանության և շարահյուսության մեջ կատարված տեղաշարժերի հիման վրա, նախդիրներն ու նախադրությունները գնալով նվազեցին։ արդի հայերենում նախադրությունները վերածվեցին հետադրությունների, իսկ նախդիրները ռուսերենի աղբյուրությունում աշխարհային շրջանառության մեջ են մտնում և շատ մեծ տարածում գրւում հատկապես թարգմանական գրականության մեջ։

Մեծ փոփոխություններ են կատարվել նաև հին հայերենի բայական սիստեմում։ Ինչպես հայտնի է, դասական հայերենը բայական իր կառուցվածքով առավելապես համադրական էր, բայց դրան զուգահեռ, անհրաժեշտության դեպքում, երկրորդաբար օգտվում էր նաև վերլուծական տիպի բայաձևերից։ Հայերենի դարդացման ընթացքում տեղաշարժեր են կատարվել, որոնց հետևանքով արդի հայերենում գերիշխում է բայի կառուցման վերլուծական տիպը։ Այս պրոցեսին մեծապես նպաստել են սիբիրի հայերենում «կուռ» մասնիկի և «պիտի» սպասարկու բառի գործածությունը դիմավոր բայաձևերի հետ միասին։ Այդ առումով խոհարարման սիստեմի նաև ժխտական ձևեր հիմնականում վերլուծական բնույթ ձևեր բերեց։ Եվ այս բոլորը վճռական նշանակություն ունեցան հայերենի շարահյուսության դարդացման հետագա ընթացքի համար։

Աշխատության համարյա թե լրիւր հատվածներում հեղինակը անդրադառնում է որոշիչի և որոշյալի փոխհարաբերության հարցին՝ հայերենի դարդացման տարրեր փոփոխում։ Ըստ որում որոշիչի նախադաս գործածության փաստեր բերվում են նույնիսկ վիպասական հայերենից, այնուհետև դասական շրջանից և այլն։ Հեղինակը նշում է, որ Միայն հունարան դպրոցի աղբյուրությունը հանգեցրեց այն բանին, որ գրական լեզվում որոշիչի հետագա գործածությունը սկսեց համարվել իբրև թե դասական հայերենի պահանջներին համապատասխանող միակ հիմնական նորմա (էջ 129)։ Անշուշտ վիպասական հայերենում և դասական շրջանի մատենագրության մեջ բացառված չեն որոշիչի նախադաս կիրառության փաստերը։ այդ դեպքում որոշիչը որոշյալի հետ չի համապատասխանում ո՛չ թվով, ո՛չ էլ հոլովով։ Եկատենք, որ որոշիչի նախադաս գործածությունը պայմանավորված էր այն օրենքով, որ ածականի, դերանվան, թվականի համաձայնությունը իրենց որոշյալի հետ բացառվում էր։ դա մի պրոցեսի գոտեորումն է, երբ ածականը, դերանունը և թվականը գոյականի հետ գործածվելիս այլևս չէին ստանում ձևաբանական մասնիկներ, որոնք այնքան բնորոշ են թեքական լեզուների համար, ուստի և ձևեր էին բերում ձևական անկախություն։ Այդ նշանակում է, որ հայերենի դարդացումը թեքականությունից դեպի կցականություն թաքնված է նաև այս երկվայթի մեջ, որը շատ խորը հնություն ունի։ Այս առումով հեղինակի ըննադատությունը այն հայագետների հասցեին, որոնք աշխարհարարի շարահյուսական կառուցվածքի այս կարգի փոփոխությունները արդյունք են համարում կովկասյան կամ թուրքական լեզուների աղբյուրության, միանգամայն արդարացի է։

Այս գլխում առանձնապես հաջողված է տրոհվող նախադասության անդամներին կամ նախադասություններին նվիրված հատվածը, որտեղ հանգամանորեն քննվում են շարահյուսական այդ կատեգորիային պատկանող տարրեր տիպերն ու կառուցվածքները՝ համեմատության դուգահեռներ անցկացնելով ինչպես դարարի, այնպես էլ միջին հայերենի և աշխարհարարի տվյալների միջև։

Վերջում ուզում ենք տևիկական կարգի մի դիտողություն անել։ Քննարկվող երկի հայերեն թարգմանությունում մեծ չափերի են հասնում ուղղագրական սխալները, բառերի աղավաղումները, մեծատառերի և փոքրատառերի ոչ ճիշտ կիրառությունները, կետադրության և տողադարձի սխալ գործածությունները։ Սարժում ենք, որ այդ թերությունները հաջորդ հրատարակության ժամանակ անպայման կվերացվեն։

Իբրև եզրակացություն գոհունակությամբ պետք է նշել, որ գրախոսվող աշխատությունը հայագիտության համար մեծ հետաքրքրություններ կայացնող՝ հայոց լեզվի պատմական շարահյուսության նվիրված առաջին լուրջ ուսումնասիրությունն է, որ արժանի է բարձր գնահատման։

Լ. ԽԱՉԻՐՅԱՆ